

2 (15), 2007

ՀՏԴ 809.198.1

Լեզվաբանություն

ԲԱՌԱՅԻՆ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՅՈՒՆ
ԱԶԳԱՅԻՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ*

Շ.Պ.Սաղյան

Նորաբանությունն՝ իբրև լեզվական իրողություն, բազմազան ու հաճախապես դրսևորումներով հանդես է գալիս բառային մակարդակում և առավելապես ուսումնասիրվող բառագիտության բաժնում: Լեզվաբանության մեջ *բառային նորաբանություն* արտահայտությունը երկխմաստ գործածություն ունի: մի դեպքում այն՝ իբրև բառագիտական միավոր, հակադրվում է լեզվի այլ մակարդակներին հատուկ նորաբանություններին, մի և՛ դեպքում էլ նույն բառային մակարդակում՝ իբրև երկպայանային արտահայտությամբ կազմություն հակադրվում բովանդակային կողմին առնչվող նորաբանություններին: Մենք հավելած ենք նշան արտահայտությունն առաջին իմաստով գործածելուն, քանի որ բառը *ձևի* և *բովանդակության* միասնությամբ ստեղծված միավոր է և ինքնին չի կարող հակադրվել նշված տարրերից որևէ մեկին:

Նորաբանությունների հանգամանակից քննությունը հայ լեզվաբանության մեջ ղեկավարվում է: Թե՛ տնտեսական, թե՛ գործնական ուսումնասիրություններում զերակշռում է ավանդական հայագրները, զգալիորեն է նորաբանությունների միօրինակ դասակարգման կարիքը: Առաջիմ ավել են հետևյալ խմբավորումները.

1. *բառային, իմաստային, հնդինական* (1,204. 2,209), 11. *ընդհանրացող. մեկուսացող* (3,170), 111. *բուն // լեզվական, հնդինական // անհատական* (4,182. 5,135, 6,216):

Առաջինն ամենաընդունվածն է: Թվում է՝ այն հենված է ձևաիմաստային դասակարգման վրա. նորաբանությունները՝ իբրև բառային միավորներ, դիտվում են երկպայանային արտահայտությամբ կազմություններ: Ձևի և բովանդակության միասնական կամ առանձնապես դրսևորումներով նրանք ի հայտ են բերում տնտեսական տարբերություններ՝ բառային իմաստային: Ընդ որում ավանդաբար *բառային* են ընդունվում թե՛ բովանդակության ու արտահայտության դիտվածքում և թե՛ միայն արտահայտության դիտվածքում նոր բառերը կարծում ենք՝ նպատակահարմար է առանձնացնել նշված երկու տեսակի բառերը, քանի որ ձևաիմաստային հատկանիշով նրանք տարբեր միավորներ են (լեզվաբանները հենց այդ երկու խմբերն էլ առանձնացնում են՝ բառային նորաբանությունների ծագումը քննելիս): Ըստ այդս կունենանք երեք տիպի նորաբանություններ՝ *ձևաիմաստային, ձևային* և *իմաստային*: Առաջինները նոր են ընկալվում բովանդակության ու արտահայտության տնտեսական, օրինակ՝ *համազանց, հեռուստատեսություն* և այլն, երկրորդները արտահայտության դիտվածքում նոր բառեր են, օրինակ՝ *ինքնաձիգ* (ավտոմատ), *հիշատար* (պրոցեսոր), *տեղեկույթ* (ինֆորմացիա), իսկ երրորդները՝ բովանդակության դիտվածքում նոր բառերը՝ *Լք* (տնտեսի որոշակի րանակ, որը գուցադրվում է համակարգչի կրանին), *կամուրջ* (երկու ցանցերը կապող սարք)¹ և այլն:

Լեզվաբանները սովորաբար նշված խմբում իբրև առանձին ենթախումբ են ընդունում հնդինականի կերտած բառերը՝ քննարկելով դրանց զեղարվեստական արժեքը համատեքստում: Եթե ուսումնասիրելու լինենք այդ բառերի ձևաիմաստային դրսևորումները, ապա կստանանք, որ դրանք ոչնչով չեն տարբերվում նշված նորաբանություններից: Հնդինակի կերտած բառը նույնպես կարող է նոր ընկալվել թե՛ արտահայտության, թե՛ բովանդակության դիտվածքներում և թե՛ միաժամանակ: Այսինքն՝ հնդինակի կերտած բառը կարող է նոր լինել ոչ միայն ձևով, այլև իմաստով: Այս տեսակետից *հնդինական բառ* ոչնչով չի տարբերվում լեզվի համակարգում արդեն ավել *բառային նորաբանությունից* (փառվել, այստեղ նկատի ունենա կոնկրետ որևէ

* Առաջանիշով նշված բոլոր աշխատանքները զեկուպվել են «Երիտասարդ գիտնականների 11 գիտաժողովում»: Մոնեհանակերտ, 1997թ.:

առանկա հատվածի համար նոր դիտարկվող հեղինակային կազմությունները: Նրանց միջև բռնաճակատային տարբերությունը ձևախմբատային դասակարգման համար էական չէ. բառային-հասկացային-հեղինակային (նորաբանություններ) անմիջական հակադրություն գոյություն չունի կարող: Անհատական նորաբանությունները ոչ անհատական նորաբանություններից բաղկացած են այլ հատկանիշով (հեղինակի անվան կարևորություն), որն ուրիշ դասակարգման վնաս է առնում: Մյուս հիման վրա էլ Մ. Աբեղյանը ընդունում է *հանրական և անհատական բառակազմություններ անվանումներ* (7, 159):

Այսպիսով կարծում ենք՝ նպատակահարմար կլինի *բառային նորաբանություններ* ըստ նպատակային արտահայտության բաժանել երեք խմբի՝ *ձևախմբատային, ձևային, խմբատային*՝ յուրաքանչյուրն օրինակելով լեզվի գործառական բառեր շերտերին հատուկ նոր համարվող բառերը:

Երկրորդ դասակարգմամբ հաշվի է առնվում նոր ստեղծված լեզվական միավորի արժանավելի չափը հասարակական հաղորդակցման ոլորտում: *Հնդհանրագոյ նորաբանություններ* ենթադրաբար վաղ յոթ ու չորս պետք է անցնեն բառապաշարի գործուն շերտ՝ ի հակադրություն *մեկուսացած նորաբանությունների*, որոնք տարածվելու միտում չունեն՝ անմիջական հաղորդակցմանը չմասնակցելու պատճառով: Կարծում ենք՝ այս դասակարգումը հատկանշային բնույթ ունի. նախանշում է նոր ստեղծված բառի հետագա ճակատագիրը և կարող է վերաբերել միայն նրա գործածումից որոշ ժամանակ անց: Մակայն այս դեպքում նման բառի *նորաբանություն* դիտարկվելն արդեն իսկ իարարելական կլինի: Ինչպես Լ. Լեզայանն է նկատում «Հնդհանրագոյ նորաբանություններ են այն բոլոր նոր բառերը, որոնք՝ կարճատև թե՛ երկար ժամանակակիցություն, անընդհատ կրկնվող գործածությունների հետևանքով անցնում են բառապաշարի գործուն շերտին և հենց դրանով էլ դադարում *նորաբանություն* լինելուց» (3, 170):

Երրորդ դասակարգման հիմքը նոր համարվող բառերի հակադրությունն է՝ ըստ ստեղծման նպատակայնության: *Ընդհանուր // լեզվական նորաբանությունների* գործածության անվանողական է, նրանք ստեղծվում են հասարակական հաղորդակցմանը ծառայելու նպատակով և կայունանում են լեզվական համակարգում: Ժամանակի ընթացքում նրանք բառապաշարային տեղաշարժեր են ունենում, անցնում գործուն շերտ, այնտեղից էլ՝ հնաբանությունների շարքը, կամ իբրև նորաբանություն գործածվում համապատասխան գիտության ոլորտում: Լեզվական այս միավորներն անմիջապես կապված են արտալեզվական գործոնների հետ և բառաշերտային ակտիվ անցումայնությամբ են օժտված: *Խոսքային/անհատական նորաբանություններ*, ի հակադրություն նշվածի, կապված են որևէ անհատի հետ, արտագրվում են նրա ստեղծագործական մտածելակերպը և գործում են խոսքային մակարդակում: Այս միավորները բառապաշարային տեղաշարժեր համարյա չեն ունենում և որևէ անհատի ստեղծագործության արգելափակ են: Մասնագիտական գրականության մեջ նման բառերը քննվում են համաժամանակյա և տարաժամանակյա հայեցակետերի ոչ հստակ սահմանազատմամբ: Իբրև *նորաբանության* ենթատեսակ՝ նրանց ուսումնասիրությունը ևս պետք է կատարվի որոշակի ժամանակահատվածի հաշվառմամբ: Նրանք այսօր լեզվաբանական գրականության մեջ արդեն իսկ *նորաբանություն* չեն համարվում անցած դարի 60-70-ականներից գործածվող բազմաթիվ բառեր (հեռուստացույց, տիկերաֆոնաց և այլն), ապա համաբանորեն իբրև *հեղինակային նորաբանություններ* չպետք է քննարկվեն նաև Գր. Նարեկացու, Հովհ. Թումանյանի, Վ. Տերյանի, Պ. Լևակի և այլոց կերտած բառերը (սրանք պետք է ուսումնասիրվեն այլ ենթավերնագրի տակ): *Հեղինակային բառերի* համակարգից նորակազմ են դիտարկվում միայն տվյալ ժամանակաշրջանի հետ առնչվողները: Իհարկե, սա ձևական տարանջատում է և ընդհանրապես կապ չունի *հեղինակային բառերի* էության, ուսումնասիրության և առավելագույն բառապաշարում նրանց գրաված դիրքի հետ: Այս վերջին հանգամանքը ևս հայ լեզվաբանության արդիական խնդիրներից է: Ինչպես հայտնի է, լեզվաբանների մեծ մասը *բառապաշարի ոչ գործուն շերտի* ենթատեսակներ է ընդունում *նորաբանություններ* ու *հնաբանություններ*: Ավանդաբար *նորաբանությունների* բաժնում էլ քննարկվում են *հեղինակային բառեր* ընդհանրապես¹, նույնիսկ այն դեպքում, երբ չի կարևորվում նրանց նոր լինելը: Նրան համեմատելու լինենք *նորաբանություններ* ու *հեղինակային բառեր*, կտեսնենք մի շարք տարբերություններ:

1. *Նորաբանություններ* (ինչպես և *հնաբանություններ*) իրականության գաղափարներից անմիջական կախում ունեն. ժամանակի գործոնը նրանց Լույսան, բնորոշման համար գլխավոր է:

Մինչդեռ *հեղինակային բառի* համար սա առաջնային արժեք չունի, քանի որ նրա լազի հատկանիշն անհատական գործուն է: Համաժամանակյա և տարածամասնակա հայեցակետերով ընկճվելիս՝ *հեղինակային բառերը* բառապաշարային տեղաշարժերի չենթարկվում, նրանք մեկնորմիշտ կապված են կոնկրետ անհատի և իրենց հարապահասման հետ: Նույնիսկ այն փաստը, որ Լ. Ղ. Աղայանը Նո. Չարենցի կերտած *ողորմաբար, թելիկատատանում, գլխավորաբեր* և այլ բառերը համարում է հնացած՝ դրանք աշխարհաբար անցած շրջանի արդյունք լինելու պատճառով (3,138), առաջին հայացքից էլ թվում անհավանական: Ընդհակառակ է՝ նշված բառերը համեմատենք նույն խմբի *տանտունը, ցգը, դիվանատուն* և այլ բառերի հետ, և ակնհայտորեն պարզ կլինի, որ դրանք հնագույն լինելու հնարանքապես կապ չունեն. դրանք Չարենցի կերտած բառերն են և ուսումնասիրվում են միայն որպես այդպիսիք:

2. Հեղինակային բառը բազմագործառնող է. հնացած բաղադրիչ պարունակելով անտեքստում կարող է կատարել *հնարաբանության* դեր կամ հակառակը՝ կառուցվածքում ունենալ *նորաբանություն*՝ հեղինակային բառը հանդես կգա իբրև այդպիսին: Օրինակ՝ Մ. Խաչատրյանը կերտած *մելիքազու* բառը, կամ Հ. Խաչատրյանի կերտած *ուղտազորք*. Հովհ. Գուկասյանը ստեղծած *հռոմանայ* և այլ բառեր: Ակնհայտորեն, նման բառերը չենք կարող ուսումնասիրել իբրև *նորաբանություններ*:

Այսպիսով, *հեղինակային բառերն* առանձին խումբ են և բառապաշարի ոչ գործուն շերտու հաբխանում են *նորաբանություններին* ու *հնարաբանություններին*: Կարծում ենք՝ այս տեսակետը գերազանցելի է Հ. Պետրոսյանի դասակարգումը, ըստ որի՝ բառապաշարի ոչ գործուն շերտի խմբերն են՝ *հազվադեպ գործածվող բառեր, հնարաբանություններ, նորաբանություններ, մասնագիտական բառեր, անհատական բառաստեղծություններ, դիպվածային բառեր* (8,115):¹

Ընդաբանները տարակարծիք են նաև *նորաբանություն* և *նորակազմություն* տերմինների վերաբերյալ: Ոմանք դրանք ընդունում են իբրև համարժեք անվանումներ: Միտում կա նաև *նորաբանություն* անունը նոր առարկա, նրևույթ արտահայտող բառերին վերագրելու, իսկ հեղինակային բառերն անվանել *նորակազմություններ*: Մ. Մկրտչյանը նախընտրում է *նորակազմություն* տերմինը: Կարծում ենք՝ նշված բառն իմաստային նեղ ընդգրկում ունի, այն չի տարածվի *իմաստային նորաբանություններ* վրա, քանի որ վերջիններս նոր կազմության հետ առնչություն չունեն:

Ոճագիտությունը, օգտվելով բառագիտության սահմանումներից ու դասակարգումներից, առավելապես զբաղվում է հեղինակային նորաբանություններով: Ռուս լեզվաբանության մեջ վարյուց է արժարվում այն հարցը, որ հեղինակային բառերը *նորաբանություններ* կոչվեն այնքան էլ հարմար չէ: Գերադասելի է *օկազիոնայիզմ* (լատ occasio - դիպված) անվանումը, որն արտացոլում է հենց նման բառերի լուրջությունը՝ դիպվածով ստեղծվելը, մեկանգամյա գործածվելը (9,63): Այս տերմինն ընդունվեց լեզվաբաններից շատերի կողմից: Հայ լեզվաբանության մեջ նման միտումը դեռևս ամրակայված չէ, առանձնապես ռճագետների կողմից, որոնց առավելապես հետադրորդում են այդ բառերի ոչ թե նոր լինելը, այլ բառակազմական ու ռճական առանձնահատկությունները: Հիշտ է՝ յուրացվեց *օկազիոնայիզմ* տերմինը՝ հայերեն համարժեքով *դիպվածական բառ*, սակայն վերջինս միանշանակ դիտվում է միայն որպես *անհատական նորակազմության* տեսակ:

Ոճագիտության մեջ անհատական նորակազմության ենթատեսակներ են ընդունվում հետևյալ խմբերը՝ *պոտենցիալ, դիպվածական, հեղինակային* (4,184) // *դիպվածական, հեղինակային* (10,6. 5,140), *դիպվածական, պոտենցիալ* (11,213): *Պոտենցիալ-դիպվածական-հեղինակային* (թառեր) հակադրությունը հիմնված չէ միահատկանիշ դասակարգման վրա: Նշված անվանումները ստեղծված բառը բնութագրում են տարբեր կողմերից: Եթե *պոտենցիալ բառերը* համարվում են «լեզվի կենսունակ բառակազմական կադապարներով» (4,184) կազմված միավորներ, ապա *դիպվածականները* հանպատրաստից ստեղծված, արտառոց կազմությանը բառեր են, իսկ *հեղինակայիններն* ունեն «հեղինակային ընդգծված դրոշմ», «նրբատիպություն, անսովորություն և լեզվի բառակազմական օրինաչափություններից շեղումներ» (4,207): Ինչպես երևում է, սահմանումներից՝ *պոտենցիալ* և *դիպվածական, հեղինակային* բառերը հակադրվում են բառակազմական տեսակներից՝ իբրև բառակազմական օրինաչափությամբ և անսովոր

կազմությանը միավորները: Այսինքն նրանք ներկայացնում են միևնույն հատկանիշի տարբեր կտրվածք: Այստեղ կարծես չի արդարացվում նորոգող *հեղինակային* անվանումը, որովհետև *ատոմնեցիայ* և *դիպվածական* բառերն էլ ինքնին հեղինակային են: Իզոտ չէ, որ հենց Ս. Էլոյանն էլ խոստովանում, որ *դիպվածական* և *հեղինակային* բառերի «տարբերակումը խիստ օտարաբերական բնույթ ունի և ինչ-որ չափով նաև պայմանական է. քանի որ նրկուսն էլ միևնույն նրկույթի դրսևորումներն են», «Նրկուսն էլ վերջին հաշվով հեղինակային են և նրկուսն էլ թափափությանը շնոկում են լեզվի բառակազմական ավանդական օրինաչափություններից ու լեզվական նորմայից...» (4, 196): Այս է պատճառը, որ լեզվաբանի կողմից նույն բառը միավանանակ ընդունվել է. որպես և դիպվածական, և հեղինակային (4,200):

Դիպվածական բառերի նաև հանապառաստից ստեղծված լինելու փաստը տարբերակիչ հատկանիշ չէ, քանի որ *պոտենցիալ բառը* նույնպես կարող է ստեղծվել անմիջականորեն որևէ առաջին, առանձնապես, որ այն կերտվում է լեզվում արդեն առկա կենսունակ կաղապարով: Այսպիսով մեր կարծիքով հեղինակին ստեղծած բառը որոշակի հիմունքներով (առաջելապես՝ բառակազմական) կարող է ունենալ *պոտենցիալ* կամ *դիպվածական* հատկանիշ: Արանք ստորակարգվում են *հեղինակային* հատկանիշին: Եթե որևէ մեկը ստեղծի չեզոք նրանգավորմամբ, կենսունակ կաղապարով բառ, պալա այն կանվանվի *պոտենցիալ նրանգով հեղինակային բառ*, իսկ անստոր կազմությանը բառ՝ *դիպվածական նրանգով հեղինակային բառ*: Ս. Էլոյանը *պոտենցիալ* և *հեղինակային* բառերի տարբերություններից է համարում նաև առաջիններում հեղինակային դրոշմի բացակայությունը: Կարծում ենք՝ այս դեպքում խոսքն այն պոտենցիալ բառերի մասին է, որոնք չեզոք նրանգավորմամբ և անվանողական արժեքով են հանդես գալիս:

Չնայած վերը նշված դիտարկմանը՝ լեզվաբանը հետագայում էլ անհատական-ոճական նորաբանություններում տարանջատում է *դիպվածական* և *հեղինակային* տեսակները՝ հիմնավորելով. «Անհատական-ոճական նորաբանությունների մեջ մենք տարբերակել ենք՝ ա) *դիպվածական* և բ) *հեղինակային* տեսակները: Այս նրկու տիպերն էլ անհատական ստեղծագործության արդյունք են, բայց *դիպվածական* բառերում առավել շեշտվում է առիթի, պատի, դիպվածի և ընդհանրապես իրադրության պատհանգով ստեղծված լինելու հանգամանքը, իսկ *հեղինակային* տեսակի դեպքում՝ պատկերավորության, բանաստեղծական ներշնչանքի գործոնը» (10,6): Կարծում ենք՝ նշված տարբերակիչ հատկանիշների իրականում հեղինակային բառերի ստեղծման պատճառն ու նպատակն են ներկայացնում: Իրադրությունը հեղինակային բառի ծագման պատճառ կարող է լինել (առաջելապես՝ առօրյա խոսքում), իսկ թե ինչ նպատակներով է այն կերտվել, դա արդեն անհատական գործոն է: Եվ որպես պատկերավորման միջոց կարող է ծառայել նաև *դիպվածական բառը*, օրինակ՝ հենց Ս. Էլոյանի գիտարկումով միավանանակ և *հեղինակային*, և *դիպվածական* համարվող *մասիսակերտ, կակաշվել* (ՏՇ) բառերը: Այսպիսով՝ կարծում ենք՝ Ս. Էլոյանի կողմից *հեղինակային* և *դիպվածական բառերի* տարանջատումը հարաբերական դիտարկելու պատճառներից մեկն էլ այն է, որ նույնացվել են տեսակն ու հատկանիշը, բառի ստեղծման նպատակն ու պատճառը:

Հեղինակային և *դիպվածական* բառերի տարբերակում է կատարում նաև Լ. Ազեկյանը: Նշված նրկու միավորների միջև՝ իբրև էական տարբերություն, նա ընդունում է գրական լեզվի բառապաշարը հարստացնելու գործոնը: Բառակազմական անսովոր կազմությանը միավորներն անվանելով *դիպվածական* նա նշում է. «*Դիպվածային բառերը* հեղինակային այն նորակազմություններն են, որոնք գործ են ածվում բանավոր-խոսակցական լեզվում, հրատարակախոսության մեջ, գեղարվեստական ոճում և հատկապես մամուլում, խոսքային տվյալ իրավիճակում նույնի թեղադրանքով կամ հեղինակի ոճական որոշակի նպատակադրումով՝ խոսքն ավելի համոզիչ, պատկերավոր դարձնելու համար» (5,140): Կարծում ենք՝ այս քննադրության մեջ չկա այնպիսի տարբերակիչ հատկանիշ, որով դիպվածական բառը հեղինակային բառից առանձնանար իբրև ինքնուրույն միավոր:

Անհատական բառաստեղծությունների նրկու ենթատեսակ է ընդունում նաև Թ. Ղարազյույանը: Հետևելով ռուս լեզվաբանության ավանդույթներին՝ նա դրանք անվանում է *դիպվածական* և *պոտենցիալ* (11,213): Առաջինի ենթատեսակներն լեզվաբանն առանձնացնում է ըստ նրանց՝ գործառական ոլորտներում կիրառվելու՝ գեղարվեստական գրականության մեջ ստեղծված դիպվածական բառերն անվանելով *ստեղծագործական* կամ *հեղինակային*

նորաբանություններ: Այս դեպքում ԹՎարագլույսները *հեղինակ* բառը նեղ իմաստով է գործածում նրան վերագրելով *միայն գեղարվեստում ստեղծագործող անձ* իմաստը: Մինչդեռ *հեղինակային* կարող են լինել նաև գիտական ասպարեզում, մամուլում կերտված բառերը:

Այսպիսով՝ մեր կարծիքով նպատակահարմար է անհատների կողմից ստեղծված բառերին տրվող լեզվաբանական տերմիններից նախընտրել *հեղինակային բառ* անվանումը: Համաժամանակյա հայեցակետով քննվելիս դրանց համակարգում պետք է առանձնացվեն ժամանակային կոնկրետ հատվածի հետ կապվածները, որոնք կրնան նաև որպես նորաբանություններ: Ոճագիտական ուսումնասիրություններում *պոտենցիալ* և *դիպլոմատիկ* անվանումները հարմար է գործածել որպես հեղինակային բառերի հատկանիշներ՝ կապված բառակազմական առանձնահատկությունների հետ: Այսպես յուրաքանչյուր ուսումնասիրող զնոթ կամա դասակարգման այն հարաբերականությունից, որոնք կան քննարկված աշխատություններում:

Ուրեմն՝ ոճագիտության քննազավառում հեղինակային բառերին առնչվող արդիական խնդիրներից են նաև *անհատական նորաբանություն, հեղինակային, դիպլոմատիկ* բառ տերմինների հստակ բնութագրությունը, տարանջատումը և լեզվի գործառական քննարկումը:

Ոճագիտություն

1. Ոստ «Անգլերեն - հայերեն համակարգչային բառարան»-ի (Եր., 2004թ.):
2. Կարծում ենք՝ նպատակահարմար է նման դասակարգում ընդունել նաև հնաբանությունների համար:
3. Լեզվաբանության մեջ առաջադրվել են մի շարք գիտաբաներ՝ *անհատական նորակազմություններ, անհատական-հեղինակային նորաբանություններ, անհատական-ոճական նորաբանություններ, խոսքային կամ անհատական նորաբանություններ, հեղինակային նորաբանություններ, հեղինակային նորակազմություններ, նորակազմ բառեր, ստեղծագործական կամ հեղինակային նորաբանություններ* և այլն: Կարծում ենք անվանումների նման առատությունը խրախուսելի չէ:
4. Մեր կարծիքով այս վերջին երկուսը նույն երևույթի դրսևորումներն են:
5. Նշված տերմինի հայերեն *ներուժուկ* համարժեքը, որն առաջարկվել է Ալ. Մարգարյանի կողմից, դեռևս լեզվաբանական քննարկման չի ենթարկվել:

Գրականություն

1. Սուրիանյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1982:
2. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1993:
3. Աղայան Էդ., *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Եր., 1984:
4. Էլոյան Ս., *Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն*, Եր., 1989:
5. Ազեկյան Լ., *Ոճագիտություն*, Եր., 2003:
6. Մարտիրոսյան Ա., *Հայոց լեզվի ոճաբանություն*, Եր., 2000:
7. Մելքոնյան Ս., *Աղանակներ հայոց լեզվի ոճաբանության*, Եր., 1984:
8. Պետրոսյան Հ., *Հայերենագիտական բառարան*, Եր., 1987:
9. Лопатин В., Рождение слова, М., 1973:
10. Էլոյան Ս., *Արդի հայերենի նորաբանությունների բառարան*, Եր., 2002:
11. Դարագլույսներ Թ., Դիպլոմատիկ և պոտենցիալ բառերով ժամանակակից հայերենի բառաստեղծման համակարգում, *Լեզվի և ոճի հարցեր*, VII հ., Եր., 1983:

Արմ Հ, հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն